

ԱՐՄԱՐԱՏ

ԱՄՍԱԳԻՐ

ԿՐՕՆԱԿԱՆ, ՊԱՏՄԱԿԱՆ, ԲԱՆԱՍԻՐԱԿԱՆ ԵՒ ԲԱՐՈՅԱԿԱՆ

ԹԻՒ Ա. ՄԱՅԻՍ 1869 . Բ. ՏԱՐԻ

ՄԻ ՔԱՆԻ ԽՕՍՔ

ՄԵՐ ՍԻՐԵԼԻ ԱԶԳԱԿԻՑՆԵՐԻՆ

Մարդկային սեռի անհատները զանազանվում են միմեանցից ըստ զարգացման և ըստ պարապման, բայց մի կոչում կայ, որ մարդ անուան հետ սերտ և անբաժանելի կերպով կապակից է, որով և բոլոր մարդոց մի անզանազանելի միանմանութեան է բերում։ Այդ կոչումն է աշխատութիւնը։

Աշխատութիւնը՝ է կատարումն կենսական պահանջմանց։ Մարդուս կեանքը կայանում է հոգւոյ, մարմնոյ և մտաց միաւորութեան մէջ, ուստի և կենսական պահանջմունքները ոչքան մարմնական են, մի նոյնքան և հոգեկան են և մտաւորական։ Մեր Երկնային Տէրը, որ իւր անսահման սիրովը նախախնամում է բոլոր արարածներին, իսկ մարդուն առաւել և սիրելով հաղորդակից է արել Իրեն և երկրի վերայ թագաւոր կարգել նորան, այսքան սիրելուց յետոյ, աշխատութիւնը իբրև թշուառութեան աղբիւր չէ դրած մեր բնութեան մէջ, այլ իբրև մի բնական պահանջմունք։ Այն բոլոր բնական պահանջմունքները որ ունինք մենք, դոցա ոչ թէ կատարելն է թշուառացնում մեզ, այլ չկատարելը և վատ կատարելը։ Ինչու ուրախանում ենք մենք, երբ պատահում ենք մեր տաբիներով անջատուած ծնողին, բարեկամին, հայրենակցին։ Այդ թշուառութի՞ւն է միթէ Ելարչից շնորհած մեր հոգուն։ Բայց պարտ է գիտել, որ եթէ մարդուս միտքը այնքան չէ զարգացած, որ կարողանայ տիրել իւր հոգեկան կիրքերի վերայ, ուրեմն և ուրախութեան, նա կարող է չափաղանց ուրախանալ, մինչև ուշագնաց լինելու աստիճան, գժուելու, և մեռնելու անգամ։ Ինչ որ ասացինք այս հոգեկան պա-

հանգման մասին, նոյնը կարող ենք ասել և մտքի և մարմնի մասին։ Ի՞նչ հարկաւոր է միտք զբաղեցնել այնպիսի խնդրի վերայ, որ գեր ի վեր է մարդկային մտաւոր կարողութեան սահմանից, և կամ այնքան բեռն դնել մի մէջքի վերայ, որ նորա ուժից բարձր լինի և տանել անկարելի։ Բայց ի՞նչպէս քաղցր է մտածել զգալի էակների վերայ, ճանաչել նրանց, և նրանցով նրանց Ստեղծողի անսահման սէրը զգալ ու սիրել Նորան գիտակցաբար՝ ամենայն անձամբ՝ հոգւով և մտօք։ Ի՞նչպէս քաղցր է իւր տնկած ծառի տակ նստելը, նորան պտուղները և անձնելը։

Կարծել՝ որ երջանկութիւնը հանգստութիւնն է, այդ թէ աստուածային և թէ բնական օրինաց դէմ մեղանչել կնշանակէր, վասն զի ամբողջ բնութիւնը "Ի հանման և ի ծորման" է, ամենայն տեղ շարժողութիւն է, ամենայն տեղ կեանք է։ Եթէ ասենք՝ Աստուած մեզ տուել է ենթարկել աշխատութեան, այդ կը նշանակէր ասել, թէ Աստուած մեզ տուել է, մեր մարմնոյն հոգի կենդանի տալով և նոցա կառավարելու համար մի միտք. վասն զի այնտեղ է հանգստութիւնը, ուր ոգի — կենդանութիւն կամ շարժողութիւն չկայ։ Բայց ո՞ւր է այդպիսի մի տեղ բնութեան մէջ. մեր անշունչ բնակարանը անգամ անընդհատ շարժողութեան մէջ է իւր բոլոր մասունքներովը։ Ծառը իւր պտղովը, ծաղիկը իւր հոտովը, մեղուն իւր մեղրովը, շերամն իր մետաքսովը. բոլոր, բոլոր անբան արարածները անգամ ակն յանդիման տուեն ծուլութիւնը, որ մայր է ամենայն չարեաց, և ապացուցանում աշխատութեան անհրաժեշտ կարևորութիւնը և երջանկութեան միակ աղբիւր լինելը։ Եթէ բնազդողաբար ասլող, միակ գլխապահութեան եւ է ընկած մարդուն անասունի ենք նմանեցնում, ապա ուրեմն այն մարդուն, որ իւր միակ գլուխը պահպանելու չափ գործունէութիւն չունի, պէտք է նմանեցնել ցեցի, որ ուտում է առանց աշխատութեան ուրիշի աշխատանքը։ X

Մեր նպատակը չէ այստեղ բնագիտական մանրամասն ցոյց տալ, թէ ինչ պատճառներից է յառաջանում ծուլութիւնը, և հետևապէս ցուցնել, թէ ինչ պատմական և բնական պայմանների է կարօտ մի որ և իցէ ժողովրդի գործունէութեան առաջման և կերպ, այլ առ այժմ կամենում ենք ասել միայն, թէ աշխատութիւնն է երջանկութեան միակ ճանապարհը, և որքան գիտակցաբար լինի աշխատութիւնը, այնքան աւելի կըմօտացնէ մարդուն այդ նպատակին։ Բայց կան մարդիկ, որ երևակայութեամբ թելադրված, իրանց անձը ենթարկել են ծուլութեան, ասում են հաւատալ, որ երջանկութիւն ձեռք բերել միայն աշխատութեամբ կարելի է, թէ այս անցաւոր կենցաղոյս վերաբերութեամբ և թէ այն։ Երջանկութիւնն երկնից բռնաբարի և բուռնք յափշտակեն զնա։ Չէ՞ որ մենք առաքինութեամբ կարող ենք ձեռք բերել անանց երջանկութիւնը. բայց ո՞վ է լսել, որ առաքինութիւնը մի վերացական բան լինի և ցնորաբանութեան հետևանք։ Առաքինութիւնը գործ է, աշխատութիւն է, որ իւր նմանակցին սիրելու և կարեկից լինելու մէջ է կայանում։ Եթէ մենք ճշգիւ կատարենք աստուածային այս կենսատու պատուէրը, անշուշտ այս կեանքի մէջ ևս կարող ենք երջանկութեան մօտենալ։

Կարո՞ղ է միթէ հասարակութեան մի անհատը իւր արդար աշխատութեան պտուղը վայելել, եթէ միւս բոլոր անհատները դող և ծոյլ մարդիկ են։ Իսկ եթէ հասարակութեան մի անդամը, կարծելով որ միմիայն նիւթական ճոխութեամբ կարող է հասնել երջանկութեան, և այդ կարծիքը իրեն համար մի նոր գիւտ համարելով, ուզում է հասնել այդ նպատակին ինքնուրոյնաբար, դա պէտք նախանձի անշուշտ իւր ընկերի բաղդի վերայ, պէտք ամենայն ջանք ի գործ

դնէ, որ նա ևս չմոռանայ, որպէս զի ինքը միշտ անհամեմատ բարձր մնայ նորանից։ Նա այսպիսի կերպով հաստատած մարդը մի՞թէ երջանկութեան մօտեցած կը համարվի։ Ամենևին ոչ. վասն զի երջանկութիւնը մետաղ չէ և ոչ մետաքս, այլ հաւասարակշռութիւն պահպանել է հոգեկան, մարմնական և մտաւորական պահանջմանց մէջ։ Եթէ այդ պահանջմանց կատարելութը միայն կարելի է մօտենալ երջանկութեան, ապա ուրեմն որքան ընդհանրական լինի այդ ձըգտողութիւնը, որքան ընկերական, այնքան շուտ կըմօտեցնէ մարդուն իւր նպատակին։ Մենք չենք կարող մի զըկանք հասցնել մեր ընկերին, և հանգիստ խղճմտանքով մեր հոգին վեր ուղղել դէպի Արարչի աթոռը, և եթէ այդպէս անենք, կրկին պատիժ կընդունինք կրկնապատկելով մեր խղճմտանքի տանջանքը. վասն զի՝ երթ, կասէ, նախ հաշտեաց ընդ եղբօր քում...... վասն զի՝ զԱստուած, զոր ոչ տեսանես, զիա՞րդ կարիցես սիրել...

Վերջապէս ասել կամեցանք այսքան խօսելով, թէ աշխատութիւնը մի բնական պահանջմունք է մարդուս բնութեան մէջ դրած ի սկզբանէ անտի Արարչագործի ձեռամբ, թէ չկայ մարդ, որ ազատ լինի այդ օրէնքից, և թէ դա մարդկային սեռը երջանկութեան մօտեցնող միակ գործին է, թէ անցաւոր կենցաղոյս վերաբերութեամբ, և թէ անանց։

Այն բոլոր միջոցները, որոնք համարվում են լուսաւորութեան միջոցներ, ծառայում են այդ նպատակին. ցոյց են տալիս փորձով և բանիւ, թէ ինչպէս աւելի դիւրագոյն է, յարմարաւոր է, բնական է, վայելուչ է և, վերջապէս, օգտաւէտ է աշխատել։

Պարբերական թերթը լինելով լուսաւորութեան գործիքներից մինը, արձակ ճանապարհ ունի մտնելու ընդհանուրի մէջ և նորան իւր մտաց զարգացման աստիճանին յարմար սնունդ տալու և հասկացնելու, թէ ինչպէս պիտոյ էր աշխատել։

Չնայք անելով Արարատի երկրորդ տարվան ընթացքի գէկը, զգում ենք, որ այդպիսի մի պարտաւորութիւն և մեզ վերայ կայ կատարելու մեր ժողովրդեան մէջ. հայ ժողովրդեան եմ ասում, որին երբ համեմատում ենք այլ ժողովրդոց հետ, բոլորովին տարբեր ենք գտնում նորան թէ՛ ըստ քաղաքականին և թէ ըստ մտաւորականին և բարոյականին։ Մեր խորին ուշադրութիւնը դարձնելով այս տարբերութեան վերայ, մենք նկատում ենք, որ ոչ ամենայն աշխատութեան կերպ, որ գործ է դնում ուրիշ ազգ, կարող է գործ դնել և Հայ ազգը, բայց ինչ կերպ որ ամենակարևորագոյնն է և անհրաժեշտ հարկաւորը, այն կարող է գործ դնել և Հայը։ Այդ կերպն է՝ երկրագործութեամբ և միաբանական սիրով աշխատելը։ Միաբանական սէրը պէտք է լինի հիմն մեր աշխատութեանց, ընդհանուրի օգուտը նորա վերայ կառուցած։ Ուրախութեամբ սրտի մենք նկատում ենք, որ այս պատուական ձգտողութիւնը այժմ ամեն Հայի մէջ էլ զարթել է, ուսման և կրթութեան կարևորութիւնը ձայն բազմաց է դառել. սակայն ցաւելի է նկատել, որ շատ տեղերի յառաջընթացութիւն անզիտակցաբար և աննպատակ է....

Արարատը այս նկատողութիւնը անելով իւր սիրելի որդոցը, պիտի աշխատէ և ինքը, ընդհանուր ազգի օգուտը և բարին գերադասելով ամեն բանից։ Արարատը իւր ամեն ջանքը պիտի գործ դնէ լինել այնպիսի մի պատկեր, որոյ մէջ Հայը կարողանայ տեսնել իւր անցեալը և ներկան, և յուսով է, որ իւր հարազատ որդոց լուսաւորեալ մասը ամենայն կերպով դիւրութիւն կըտայ այդ նպատակին մօտենալու։

Ղ. Աղայեանց